ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Արմավիրի մարզ , Խոյ համայնք , գյուղ Գեղակերտ

18 մարտի 2025 թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 4

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ

2025 թվականի մարտի 18-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս բնակավայրի դպրոցում տեղի ունեցավ հանրային քննարկում: Օրակարգում՝ Խոյ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը ներկայացնել և բնակչության հետ քննարկել Խոյ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման քվեարկությանը դրված առաջարկները, դրանց օգուտներն ու արդյունքները, ինչպես նաև հանրությանը իրազեկել և նախապատրաստել քվեարկության փուլին:

Հանրային քննարկմանը ներկա էին «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի աշխատակազմը, Խոյ համայնքի ավագանու անդամները, Խոյի համայնքապետարանի աշխատակազմի ոլորտային ներկայացուցիչները, ինպես նաև մեծ թվով բնակիչներ: Մուտքի խոսքով հանդես եկավ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի աշխատակից Ազգանուշ Մնացականյանը, ով մանրամասն ներկայացրեց 2025 թվականի մասնակցային բյուջետավորման ողջ գործընթացը, մասնակցային բյուջետավորման մոդելի հիմնական սկզբունքները, Խոյ համայնքում ներկայացված և ընտրված ծրագրային առաջարկները, համայնքապետարանի կայքում գրանցման և քվեարկության գործընթացը: Այնուհետև խոսքը փոխանցվեց ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Արտաքին կապերի, զարգացման ծրագրերի, տուրիզմի, սպասարկման բաժնի պետ Անի Սարգսյանին, ով հորդորեց հնարավորինս ակտիվ լինել քվեարկության ողջ ընթացում և կարևորեց վերջիններիս դերը ծրագրի արդյունավետ իրականացման գործում: Հիշեցրեց նաև, որ բնակիչները կարող են քվերակել երեք ծրագրային առաջարկի օգտի:

Հանրային քննարկման ընթացքում բնակիչները ողջունեցին ներկայացված առաջարկները և խոստացան, որ մեծ ակտիվությամբ կմասնակցեն քվերակությանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Գրապիոն Շառոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Անի Թադևոսյան